

կարգերը իրենց գործով միայն չեն ղեաղուել, այսինքն սովորեցնելով և քարոզչութեամբ: Նոքա եռանդով ղեաղուել են և աշխարհային գործերով և այս հանգամանքի շնորհիւ ահագին հարստութիւն են ձեռք բերել: Նոքա պահել են կրի, մետաքսի, աղիւսի, երկաթի գործարաններ. ունեցել են զուարճութեան տեղեր իրենց պարագաներով, պահել են հսկայական տպարաններ, հրատարակչական հաստատութիւններ և վաճառատներ, որոնց մէջ էլ սարսափելի կեղծիքներ են կատարել. Փարիզի նոյս գլխաւոր տպարանից դուրս էին գալիս հետեւեալ առաջնակարգ հանդէսները. «Խաչ», որ 160,000 օրինակ էր տպուում, «Կիւրակնօրեայ խաչ»—տպուում էր 250,000 օրինակ, «Փարիզի խաչ»—22,000, «Ուխտաւոր»—71,000 օրինակ, «Սրբոց կեանք»—165,000 օրինակ, «Բարի ընթերցանութիւն»—20,000 օրինակ:

ԲՈՂՈՔԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻՆԵՐ

Կեօնիգսբերգի երիտասարդ պրոֆեսսոր Հ. Ախելիս, Բերլինի Տիեզերագիտութեան ձեմարանում կատարուած ստոյգ հաշիւների հիման վերայ՝ հետեւեալ սրամիտ կերպով է որոշում Փրկչի մահուան օրը:

Յիսուս խաչուել է ուրբաթ օր (Մատթ. 27, 62. 28, 1. Մարկոս 15, 42. Ղուկաս 23, 54. Յովհ. 19, 31): Խաչելութեան նախընթաց երեկոյեան Նա կերել է աշակերտների հետ պատէքի գառը, որ հրէաներն ուտում էին ճիսան ամսի 14-ին. երեք համասեւ աւետարաններից այդպէս էլ երևում է, որ Նա 14-ի գիշերը մատնուել է և 15-ին խաչուել. բայց Յովհաննու աւետարանին նայելով Նա պէտք է խաչուած լինի նիսանի 14-ին: Ո՞ր տարին է խաչուել, մեզ յայտնի չէ. բայց գիտենք, որ Պիղատոս Հրէաստանի կառավարիչ էր 26—36 թ.-ը, և 36-ի զատկին Նա արդէն հեռացած էր պաշտօնից: Արդ, Ախելիս սկզբում այսպիսի հաշիւ էր արել.

Նիսանի 14-ն ընկնում էր

15-ը

Շաբաթ

կիւրակէ

26 թ.-ին

Չորեքշաբթի

հինգշաբթի

27 « »

Երկուշաբթի

երեքշաբթի

28 « »

Կիւրակէ	երկուշաբթի	29 թ.-ին
Ուրբաթ ասպրիլի 6-ին	շաբաթ	30 « »
Երեքշաբթի	չորեքշաբթի	31 « »
Երկուշաբթի	երեքշաբթի	32 « »
Ուրբաթ ասպրիլի 3-ին	շաբաթ	33 « »
Երեքշաբթի	չորեքշաբթի	34 « »
Երկուշաբթի	երեքշաբթի	35 « »

Այստեղից հետեւում էր ընտանաբար, որ Յովհաննու աւետարանի աւանդածը ճիշտ է. Յիսուս չի կարող նիսանի 15-ին խաչուած լինել. մնում էր ընտրել՝ արդեօք 30 թ.-ի ասպրիլ 6-ին է՞ր խաչուել, թէ 33 թ.-ի ասպրիլ 3-ին:

Դորա համար պէտք է ի նկատի ունենալ, որ Ղուկասու աւետարանի համաձայն Յիսուս իւր հրապարակական գործունէութիւնն սկսեց անմիջապէս Յովհաննէսից յետոյ, որ հանգէս էր եկել Տիբերիոս կայսեր 15-րդ տարին, երբ Պիղատոս Հրէաստանի կառավարիչ էր, չերոյգէս Գալիլիայի չորրորդապետ էր, նորա եղբայրը Փիլիպոս Խաւրացւոց չորրորդապետն էր, Լիւսանիասը Աբելինացւոց, — Աննան և Կայիափան քահանայապետ: Այդ բոլորը հաշուելով և միմեանց հետ զուգորդելով՝ կստանանք 28 թ. օգոստոս 19-ի և 29 օգոստոս 18-ի ժամանակամիջոցը:

Յովհաննու աւետարանի մէջ (2, 20) հրէաներն ասում են Յիսուսին նորա քարոզութեան առաջին օրերը, թէ տաճարը 46 տարի է որ շինուում է: Այդ ևս կընկնի 27—28 թ.-ներին:

Ապա, քանի որ ըստ Ղուկասու Յիսուս մի տարուայ գործունէութիւն է ունեցել, ըստ Յովհաննու 2—3 տարուայ՝ երկու աւետարանիչներն էլ ուրեմն իբրև նորա մահուան տարի ընդունել են 30 թ.-ը, որ և հաստատում է վերոյիշեալ հաշիւը և իրաւունք տալիս բաւականաչափ հիմնաւոր վստահութեամբ 30 թ.-ի ասպրիլ 6-ը իսկական աւագ ուրբաթ համարելու:

Սակայն Ախելիս նոր ի նոր վերստուգելով իւր հետազոտութիւնները եկել է այն եզրակացութեան, որ 30 թ.-ին նիսանի 15-ն է ուրբաթ օր եղել — ասպրիլ 7-ին, և ուրեմն դարձեալ նախապատուութիւն պէտք է տալ համատես աւետարանների աւանդութեան և ընդունել, որ Յիսուս խաչուել է 30 թ.-ի ասպրիլ 7-ին:


Ըստ երևութին հաշիւը շատ պարզ էր և այդպիսի տատանումների տեղիք չպէտք է լինէր. սակայն իրօք խիստ բարդ խնդիրներ կան այստեղ: Հրէաները լուսնական ամսով են հաշուում, որով 12 ամիսը լինում է միայն 354 օր, և նորա ստի-

պուլած են 2—3 տարին մի անգամ մի «աւելեաց» ամիս դնել, որ արեգականային տարու հետ ուղիղ գայ հաշիւը: Տարին սկսում էր դարնանը և նիսանը առաջին ամիսն էր, որ պէտք է ընկնէր միշտ դարնան գիշերահաւասարից յետոյ. և որովհետեւ իւրաքանչիւր ամիս լուսնի մէկին էր սկսում, ուրեմն նիսանի 14—15-ը լուսնի լրմանը պէտք է լինէր: Դժուար է ամսի առաջին օրը որոշել այն պատճառով, որ ճիշտ չգիտենք, արդեօք աստղաբաշխական հաշուով էին որոշում, թէ սպասում էին, որ լուսնի աղեղը երևար, ապա՝ ամսի մէկ դնէին: Յամենայն դէպս 30 թ.-ի ապրիլ 6 կամ 7-ը հաստատուն թիւ կարելի է համարել, և Ախելիսի այս հաշիւը իւր նշանակութիւնը կուսնենայ աւետարանական ու առաքելական շրջանի ժամանակագրութիւնը ստուգելու համար:

ԱՆԳԼԻԱ

Լոնդոնի քաղաքապետարանին մէջ կատարուեցաւ Աստուածաշունչի ընկերութեան հարիւրամեակը: Կը նախագահէր լորտ քաղաքապետը, որ Հրեայ մըն է. ներկայ էին վարչապետ պ. Պալմերը և ուրիշ բազմաթիւ անձնաւորութիւններ, ամէն կուսակցութենէ, ամէն կարծիքէ: Վարչապետը խօսք առնելով, հաստատեց թէ Աստուածաշունչը 400-է աւելի լեզուներու թարգմանուած է, այդ ընկերութեան շնորհիւ: Աստուածաշունչի ընկերութիւնը Անգլիոյ միսիոնարական մարմիններուն ամենէն հզօրն է: Դար մը առաջ տարբեր յարանուանութիւններէ 300-ի չափ անձեր Լոնդոնի մէջ դուրսարուելով, «Անգլիական և օտար Աստուածաշունչի ընկերութիւն» ը կը կազմէին, ճիշտ այն պահուն ուր Անգլիա խուճապի մէջ էր և կը ուպառազինուէր՝ Փրանսական արշաւանքի մը սպասելով: Նորահազմ ընկերութեան առաջին գործը եղաւ Պալէսի բարբառով հրատարակել ս. Գիրքը: Առաջին տարուան միջոցին ընկերութիւնը 691 ստերլին ծախսեց. 1902-ին 241,143 ստերլին ծախսած էր. ընկերութեան հաստատութենէն ի վեր 13 միլիոն ստերլին ծախք եղած է: Ընկերութիւնը անցեալ տարի հինգ միլիոնէն աւելի ս. Գիրք հրատարակեց. իր հաստատութենէն ի վեր հրատարակուած օրինակներուն համագումարն է 180 միլիոն: Միայն Լոնդոնէն ամէն օր 7000 հատոր կը զրկուի արտասահման: Ըն-

կերութեան բոլոր մթերանոցներէն օրական 16000 օրինակ հերապարակուի: Այս բոլոր Աստուածաշունչները և Պատկարանները կը ղրկուին աշխարհի ամէն կողմը: Գրքերը ցրուելու համար, ընկերութիւնը իւր ծախքով արտասահմանի միսիոնարական հաստատութիւններուն կը ղրկէ. փոխարէն միսիոնարները կեդրոնին կը յանձնեն ինչ որ գոյացած է իրենց ծախած գրքերէն, աստին անդին ղրկուելու ծախքերը ղեղչելէ վերջը: Տպագրութեան և ընծախրին մէկ փոքր մասը միայն կը հայթայթուի այս կերպով: Ընկերութիւնը, սակայն, միշտ կընդարձակէ իր գործը, և որչափ մեծ կորուստ կրէ, այնչափ ուրախ է, որովհետեւ ատիկա կը նշանակէ թէ Աստուածաշունչը աւելի տարածուել սկսած է աղքատ ժողովուրդներու մէջ: Ընկերութիւնը աշխարհի ամէն կողմը գործակալներ, շրջիկ դրավաճառներ, կին—վաճառողներ ունի: Ասոնք միսիոնար չեն, քարոզելու իրաւունք չունին. իրենց պարտականութիւնն է ս. Գիրք ծախել, և այս նպատակով աշխարհի ամէն կողմը կը թափառին: Թէև Աստուածաշունչի Ընկերութիւնը 180,000,000 Աստուածաշունչ ցրուած է, բայց ասոնք աշխարհի բնակչութեան միայն $7\frac{1}{10}$ մասին խօսած լեզուներով հրատարակուած են. հետեւեալը, տակաւին $5\frac{1}{10}$ -ին, այսինքն 450 միլիոն բնակիչներու ալ հասկնալի ընելու է ս. Գիրքը: Ասոնց լեզուով բնա մը թարգմանուած չէ Աստուածաշունչէն:



ԵԿԵՂԵՑԻ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ

Ապրիլի համարում յայտնեցինք, որ Նորին Սրբութիւն Վեհափառ Հայրապետը բարեհաճել էր իւր կողմից ներկայացուցիչ նշանակել Կիլիկիոյ կաթողիկոսի ս. Օծման Կեսարիոյ առաջնորդ Գեր. Տրդատ եպս. Պալեանին:

Ամսոյս 15-ին Ամեն. Պատրիարքը հեռագրով յայտնեց, որ Տրդատ սրբազանը հիւանդութեան պատճառաւ հրաժարուել է Կիլիկիա գնալուց. Նորին Սրբութիւնը եր-